

† ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԵՅ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՏԵՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍ

1. ՔՐԻՍՏՈՍ աշխարհ գալով նոր վարդապետութիւն մը սորվեցուց, և այդ վարդապետութիւնը ընդունողներուն և իրեն հաւատացողներուն յատուկ պաշտաման ձևեր աւանդեց, և հաւատացելոց իրարու հետ յարաբերութիւնները կանոնաւորելու համար եկեղեցւոյ մէջ իշխանութիւն ալ հաստատեց; Վարդապետութիւն և պաշտամունք և իշխանութիւն եղան միութեան կապեր, որովք Քրիստոսի հաւատացողներ, կամ բուն իրենց անունով Քրիստոնեաներ, իրարու հետ յարաբերութիւն ունեցող խումբեր կամ ժողովներ սկսան կազմել, որք քրիստոնէութեան մէջ յունական բառին ընդհանուր գործածութեամբ կոչուեցան ԵԿԵՂԵՑԻ: Այդ անունը քրիստոնէից ժողովները արտայայտած տաեն միշտ նոյն ընդարձակ իմաստը չունեցաւ Քաղաքի կամ աւանի մը քրիստոնէութիւնն ալ եկեղեցի մը կոչուեցաւ, ինչպէս ազգի կամ երկրի մը քրիստոնէութիւնը, մինչ միւս կողմէ ամբողջ քրիստոնէութիւնն ալ մէկ սուրբ և ընդհանրական եկեղեցի կը կազմէ: Քրիստոնէից ընդհանուր միութիւնը՝ Քրիստոսի ԵԿԵՂԵՑԻ կը կոչեմք, իսկ ազգութեամբ և ծէսով տարրեր եկեղեցիներ կը կոչուին Հայ ԵԿԵՂԵՑԻ, Յոյն ԵԿԵՂԵՑԻ, Լատին ԵԿԵՂԵՑԻ և սրբիներ, ինչպէս նաև նոյն իսկ Առաքելոց ժամանակէն կորնթոսի ԵԿԵՂԵՑԻ, Թեսաղոնիկէի ԵԿԵՂԵՑԻ, Եփեսոսի ԵԿԵՂԵՑԻ, և ուրիշ քաղաքներու ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ կոչումներ գործածուած են:

2. Քրիստոսի հետեւողները նորա կենդանութեան ժամանակ իսկ սկսան որոշ և հաստատուն խումբ մը կազմել, որք իրեն հետ կապուած ու միացած էին, և անոր մէջէն առաջ Քրիստոս նախ տասուերկու առաքեալները, յետոյ եօթանասունուերկու աշակերտները, և հարկաւ Քրիստոսի հետևողներ պատկառելի թիւ մը կը կազմէին որ Փարիսեցիները վարանե-

լով սկսան ըսել թէ «Ահաւասիկ աշխարհ ամենայն զկնի նորա գնաց» (Յովհ. Ժ.Բ. 19): Պահ մը Քրիստոսի մահուան ատեն նորա հետևողները ցրուեցան, բայց յարութեան աւետիսին վրայ շուտով նորէն Քրիստոսի շուրջը համախմբուեցան, այնպէս որ սա իւր համբարձումէն առաջ հինգչարիւրէ աւելի հաւատացելոց միանդամայն երեցաւ (Ա. Կորնթ. Ժ.Ե. 6): Հոգւոյն Սրբոյ գալստեան օրը երեք հազար հոգիներ մկրտուեցան, որ է ըսել Քրիստոսի նկեղեցիին մէջ մտան (Գործ. Բ. 41), իսկ տաճարի կաղին բժշկութեան վրայ մկրտեաններուն թիւը հինգ հազար եղաւ (Գործ. Դ. 4, և անկէ ետքը շարունակ աճեցաւ այդ թիւը. Սրուսաղէմէ դուրս քաղաքներու մէջ ալ տարածուեցաւ, և ուր բնակութեամբ ազգով և լեզուով տարրեր խումբեր կազմուեցան, յատուկ և ինքնուրոյն ժողովներ կամ եկեղեցիներ սկսան դոյցութիւն ունենալ:

3. Այդ խումբերու կազմութիւնը իւր անհրաժեշտ պայման և էական պահանջ ունէր նոյն խումբերուն կանոնաւուրութեան հակերու իրաւունքը, և այս է եկեղեցական իշխանութիւնը՝ Քրիստոս այդ իշխանութիւնը յանձնեց իւր ընտրած առաքեալներուն, և որովհետեւ տասուերկուները հաւասար նկատեց, յանձնարարութիւնները ու իրաւունքները տասուերկուներուն ալ տուաւ, հետևաբար տասուերկու առաքեալները և հաւասար և նմանօրինակ կերպով եկեղեցւոյ առաջն իշխանաւորներն եղան: Սակայն իշխանութիւնը անոնց անձին յատուկ պարզ չէր, այլ հանրութեան օգտին ու պէտքին պահանջն էր, և հետևաբար տեսղական և յաջորդական մի տուշութիւն էր: Առաքեալները իրենց կենդանութեան ուրիշներու ալ փոխանցեցին այդ իշխանութիւնը, և իրենց մահուանէ ետքը ուրիշներու թողուցին նոյնը, որպէս զի իրենց ներկայ լինել չկրցած տեղը, կամ իրենց այլ ևս կենդանի չեղած ատենը, Քրիստոնէից համայնքներ, որ է նկեղեցիներ, իշխանութեան պէտքէն և օգուտէն զրկուած չմնան:

4. Քրիստոսի նկեղեցին ոչ իւր ընդարձակութեամբ նկատելու մտադրութիւն ունինք, և ոչ Քրիստոսի նկեղեցւոյն կազմութեան շուրջը յուղուած խնդիրներու քննութիւնն ընել: Մեծ եկեղեցւոյն մասերէն մին, որ մեզի կը պատկանի, Հայոց Ուղղափառ Սուրբ Նկեղեցին է, և կուզեմք զայն ներկայել իւր առաքելական սկզբնաւորութեան, իւր լուսաւորչական աճման, և իւր նախընծայ գործունէութեան մէջ: Լորր Քրիստոս աւե-

տարանը քարոզեց և եկեղեցին հիմնեց Հրէաստանի մէջ կը գործէր, և Երուսալէմ ու Գալիլիա եղան իւր բանից և հրաշից ասպարէցը: Հրէաստան ինկած էր Հռովմէական կայսրութեան, ներքեւ, և մաս կը կազմէր Արևելից կոչուած մեծ բդեշխութեան որ Քրիստոսէ 6օ տարի առաջ կազմուած էր Ասորւոց կամ Սելիկեանց թագաւորութեան ջնջուելովը: Կայսերութեան մաս էր նաև Նդիպտոսի մեծ բդեշխութիւնը որ Քրիստոսէ 30 տարի առաջ Պտղոմէանց թագաւորութեան տեղը անցած էր: Խոկ կայսերութեան կերպոնն էր Լատինական աշխարհը Խտալիայով Գաղղիայով՝ Սպանիայով և Ավրիկէով: Խոկ Թրակիոյ և Ասիոյ և Պոնտոսի յունական նահանգներուն բդեշխութիւնները կը լրացնէին Հռովմայ տիեզերածաւալ կայսերութեան սահմանները: Եյդ գիծերէն անդին էին Պարթևաց և Հայոց և Մարաց տէրութիւնները դէպ յարենելս և Նթովպիոյ թագաւորութիւնը դէպ հարաւ, որք թէպէտ կայսերութեան մաս չէին կազմեր, բայց ծանօթ տեղեր էին, և պատերազմի ու խաղաղութեան առիթներով կայսերութեան հետ յարաբերութեան մէջ կը գըտնուէին: Քրիստոսի Եկեղեցին որ կայսերութեան մէջ ծագում առաւ, նախնարար կայսերութեան նահանգներուն մէջ սկսաւ քարոզուել ու տարածուել: Բայց միւս թագաւորութիւններն ալ իրենց անընդմիջական յարաբերութեանց ջնորհիւ, առաջին ժամանակներէն քրիստոնէութեան ձայնը լսելու և աւետարանի քարոզութիւնը ընդունելու երջանկութեան արժանացան:

5. Քրիստոսի կենդանութեան ժամանակ Հայոց անունը յիշուած չէ ընկալեալ և փաւերական գիրքերու մէջ, բայց Հայոց շատ կանուխէն աւետարանի հաւատքին աշակերտած լինելը տեղի տուաւ աւանդական յիշատակներու: Հազիւ թէ այս տեղ յիշուելու չափ կարեսրութիւն կրնայ ունենալ երեք մոգերուն կամ գոնէ մէկին Մոկաց նահանգէն եկած լինելը, որ պարզապէս նմանաւայնութեան բառախաղ մը կրնայ նկատուվի: Բայց բաւական կարեսրութիւն ստացաւ կարծելը թէ Քրիստոսի Երուսաղէմ մտնելուն ատեն ներկայ գտնուող հեթանոսները (Յովհ. Ժ. 20), հայեր եղած լինին: Խորենացի կը նոյնացնէ անոնք Արգար թագաւորի գեսպաններուն հետ, որք եկած էին Արգարու յանձնարարութեամբ որպէս զի Քրիստոսը Նդեսիս տանին թագաւորին հիւանդութիւնը բժշկելու (Խոր. 229), բայց Քրիստոս բաւականացած է իւր մահուանէ ետքը աշակերտ մը յղելու խոստումով: Յառաջ բերուած են նաև

Արգարու առ Քրիստոս և Քրիստոսէ առ Արգար գրուած նամակներու պատմէնները (Լաք. Յ. Խոր. 228), և միանդամայն կը պատմուի թէ Արգարու դեսպաններ ուղած են Քրիստոսի պատկերը գծել, բայց Քրիստոս դաստառակ մը երեսին վրայ դնելով իւր կերպարանը տպաւորած է, և այդ անձեռագործ պատկերն ալ նամակին հետ Եղեսիա քերուած է: Այդ աւանդական պատմութեանց զօրութեամբ Հայերը Քրիստոսի կենդանութեան օրէն Քրիստոսի հաւատացած լինելու պարձացնեն:

6. Արգարու և նամակներու և դաստառակի պատմութիւնները մեծամեծ դժուարութեանց կը բաղիխն քննական տեսութեանց առջև Արգարին և բոլոր Արգարներուն պարզապէս Եղեսիոյ կամ Ռոսոյենայ թագաւոր եղած լինելը, քրիստոնեայ Արգարի մը Քրիստոսի երկրորդ դարուն մէջ յիշուած լինելը, արտաքին պատմութեանց և ժամանակակից հեղինակաց վկայութեամբ Հայոց թագաւորներուն մեր պատմութեան յիշածներէն տարբեր անձեր եղած լինելը, սոյն եղելութեանց առաջին պատմագրին խսկապէս ժամանակակից չինելը, բայց ամենէն աւելի Քրիստոսէ մնացած բնաւ զրութիւն մը չգըտնուիլը, և եթէ իրօք Քրիստոսէ զրուած նամակ մը գտնուէր՝ նոյն իսկ աւետարաններէ վեր դասուած ու պատուուած լինելու հարկը, քննական ստուգութեան և վկայեալ վաւերականութեան հետևողները կը ստիպէն չպնդել Քրիստոսի կենդանութեան ատենէն Հայոց Քրիստոսի հաւատացած լինելուն աւանդական յիշատակներուն վրայ Սակայն ասով մեր ազգային եկեղեցւոյն առաքելական սկզբնաւորութիւնը երբէք վնաս մը չկրեր, և մեք կը ձեռնարկեմք յառաջ բերել և բաղդատել առաքելական քարոզութեանց մասին մեզի հասած զանազան յիշատակները:

Ս. ԹԱԴԻԾՈՍ ԱՐԱՔԵԵԱՆ

7. Սովորաբար կրկնուած աղդային պատմութեան համեմատ, Քրիստոսի համբարձումէն ետքը, երբ առաքեալք ձեռնարկեցին հեթանոսները աշակերտելու հրամանին գործադրութեան, վիճակաւ բաժնեցին իւրաքանչիւրին երթալու կողմը Արևելեան աշխարհներ, Հայք և Պարթևք և Հնդիկք, Թովմաս առաքելոյն վիճակեցան, և սա նախ և առաջ Արգարին տրուած խոստման համեմատ իւր հարազատ և երկուորեակ եղայրը՝

Թաղէսոս դրկեց Սղեսիա, մարմնոյ բժշկութիւն տալու և հոգ-
ոյ փրկութիւն քարոզելու: Թաղէսոս ուղղակի եկաւ Սղեսիա,
Արգարը բժշկեց, աւետարանը քարոզեց, Արգարը և իւր ար-
քունիքը և ժողովուրդը քրիստոնէութեան դարձուց, և իւր տե-
ղը փոխանորդ և քրիստոնէից գլուխ ձեռնադրեց Աղջէ եպիս-
կոպոսը, որ յառաջ թագաւորին խոյրարարն էր, և ինքն Սղե-
սիայէ մեկնելով գնաց ի Մեծ Հայս, ուր կիշխէր Սանատորուկ՝
Արգարու քեռուրդին: Այս պատմութիւնը երկու որոշ մասերու
կը բաժնուի. առաջին՝ Թաղէսոսի գործունէութիւնը յնդեսիա,
որ է Ոսրոյենայ թագաւորութեան մայրաքաղաքը Միջագետաց
մէջ, և երկրորդ՝ նորա գործունէութիւնը Մեծ Հայոց մէջ և
նահատակութիւնն յԱրտազ Վասպուրականի նահանգին մէջ: Ս-
ղեսիոյ մասին աղբիւրը յայտնապէս ասորական է և Լարուք-
նեայի գրուածէն փոխանցուած. իսկ Մեծ Հայոց և Արտազու
մասին աղբիւրը զուտ ազգային պէտք է ընդունել, վասն զի
ասորականին մէջ կը պակսի: Եւ ոչ միայն կը պակսի, այլ և
կը հակառակի, որովհետև ասորական բնագրին համեմատ Թա-
գէսոս վախճանած և թաղուած է յնդեսիա առանց ուրիշ տեղ
երթալու (Լար. 45), մինչ Լարուքնեայի հայերէն թարգմանու-
թիւնը Թաղէսոս Սղեսիայէ Արմելք կանցնէ (Լար. 46), հար-
կաւ ազգային աւանդութեան կցելու համար:

8. Այսաեղ հարկ է դիմել, որ ոչ թէ Լարուքնիայի հայե-
րէն թարգմանութիւնը, այլ և նոյն ինքն ասորերէն բնագիրը
ազաւաղուած է և օտար ձեռք մտնելովը խանգարուած, այն-
պէս որ պէտք չէ ընաւ իրեւ բնագրի ստուգութիւն ընդունել
Թաղէսոսի եղեսիոյ մէջ վախճանելը, այլ Ասորւց ապագայ դա-
բերու մէջ Հայոց դէմ զգացած հակակրութեան արդիւնք հա-
մարել այս կտորին աղաւաղումը, և աւաքելոյն Հայաստան եր-
թալուն իրենց պատմութենէն ջնջուիլը: Առ այս կը նպաստէ
գիտել թէ Թաղէսոսի մեկնելուն համար եղած պատրաստութիւն-
ները աւելի ուղեկորութեամբ մեկնելուն յարմար կուգան, քան
թէ մահուամբ աշխարհէ մեկնելուն, և միւս կողմէ ի սկզբանէ
մինչև ցայսօր Սղեսիոյ մէջ երբէք Թաղէսոս առաքելոյ գերեզ:
ման յիշատակուած չէ: Անոր համար հնար չէ պարզապէս Լա-
բուքնիայի ասորերէնին հիմնուելով ուրանալ Թաղէսոս առաքե-
լոյ Հայաստան անցնելը, և իրաւամբ կրնայ արդարանալ ազգա-
յին աւանդութիւնը որ Սղեսիայի Թաղէսոս կը նոյնացնէ Ար-
տազու Թաղէսոսին հետ: Բայց ինչ որ աւելի ծանրակշիռ կեր-

պով կազդէ ժամանակիս պատմութեան վրայ, և զոր պէտք է այլ ևս իբր պատմական սառուղութիւն ընդունել, Արդարու վերագրուած թագաւորութեան սահմաններուն անյարմարութիւնն է, որովհետև այդ միջոցին եղեսիա և Արտազ նոյն թագաւորին չէին հապատակեր, Ուրոյենէ և Հայաստան զատ զատ տէրութիւններ էին, և հնար չէր որ Սդեսիոյ Արդարը Հայաստանի վրայ ալ իշխէր, ինչ որ կերպով մը ազգային աւանդական պատմութիւնն ալ կընդունի, Հայաստանի վրայ իշխող և ինքնազլուխ գործող Սանատարով թագաւորը ցուցնելով:

9. Կարենոր խնդրոյ նիւթ մըն ալ Թաղէսո առ աքելոյն անձն է: Աւետարաններուն մէջ յիշուած է տասուերկուներուն կարդին Ներէսո որ անուաննեցաւ Թաղէսո (Մատթ. Ժ. 3), որ ուրիշ տեղ Յուղա Յակոբեան կոչուած է (Պուկ. Զ. 16), և Յոյններ և Լատիններ առհասարակ այս Յուղա Թաղէսուն զատ ուրիշ Թաղէսո անունով առաքեալ կամ աշակերտ չեն ճանչնար և չեն ընդունիր: Ասորական աղբիւրն է միայն որ երկրորդ Թաղէսո մը ևս կը յիշէ, ոչ երկոտասանից այլ եօթանասոնից մէջէն, և Տիտիմոս կամ Երկուորեակ կոչուած Յուղա Թովմաս առաքելոյն երկուորեակ եղբայրը, և այդ միակ ասորական աղբիւրէն առնելով յիշած են մեր պատմիններ և օտարներէն Եւսեբիոս՝ որ ինքն ալ Ասորւոց երկրէն էր: Սակայն կարենոր է դիտել որ ինչպէս մէկ Յուղա Թաղէսո ընդունողներ, սոյն առաքելոյն Հայաստան գալը կընդունեն, նոյնպէս երկու Թաղէսո ընդունողներն ալ երկուքին զատ զատ Հայաստան գալը կընդունեն, այնպէս որ Թաղէսոսի մը Հայաստան գալը երկու ենթաղրութեանց ներքև ալ անվիճելի կը դառնայ, և միայն խնդիրը կը վերածուի ճշգելու թէ մէկ Թաղէսոս մը թէ երկու Թաղէսոսներ եկան Հայաստան աւետարանը քարոզել: Սեր ագդային հայրեր և հեղինակներ երկու կարծիքին ալ համաձայնած են, բայց առաւելապէս երկու Թաղէսոսներս դրութիւնն է որ ընդհանրացած է, և մեր տօնտկան կարգադրութիւններն ալ երկու Թաղէսոսներու գոյութիւն կենթադրեն, մին եօթանասոնից թիւէն և Թովմայի եղբայր որ Միջագետքի ճանպով կուգայ, և միւսը երկոտասանից թիւէն Յուղա Թաղէսոս կոչուած որ կիլիկիոյ և Կապաղովիկոյ կողմէն կը մտնէ Հայոց երկիրը:

10. Խնդրոյն վերջնական որոշումը գրեթէ անհնարին կը գառնայ քանի որ յունալատին աղբիւրներ բացարձակապէս միակ Թաղէսոսի դրութեան կը նպաստեն, իսկ ասորահայ ա-

բիւրներ եօթանասնից թիւէն երկրորդ Թաղէսու մը ևս կընդունեն, և երկու աղքիւրներ իրար հերքելու և ջնջելու չափ զօրաւոր փաստեր չունին: Միայն թէ ասորական առաջին աղքիւրն ալ իւր երկրորդ Թաղէսուին Հայաստան անցնիլը շընդունելով և անոր վախճանը Նդեսիոյ մէջ դնելով, միակ Թաղէսու մը թողած կը լինի Հայոց համաձայն յունալատին աղքիւրներուն, և մնան ուրեմն մեր հայ աղքիւրները որ Նդեսիոյ և Արտագու Թաղէսուները նոյնացնել կը ճգնեն, և մեք հարկաւ մեր աղքիւրները նախագասել կը սիրեմք, սակայն ընդհանուր ընդունելութեան չենք հանդիպեր, Ուստի բոլորովին անտեղի չէր լինիր ըսել, որ Թաղէսու առաքելոյ մը առաջին քարոզութեան զուտ հայկական աւանդութիւնը, յետ ժամանակաց ասորական աւանդութեամբ ճանչցուած Թաղէսու աշակերտի պատմութեան հետ պատահական պատուասու մը ունեցած է, և Լարուրնիայի զրութեան մէջ փոքրիկ զարտուղութեամբ մը ուզուած է գտնել և լուսարանել Հայոց Թաղէսուին ինչպէս և ուստից գալը. հարկաւ աւելի յստակ աւանդութիւն մը չգըտնելով Թաղէսուի զալուստը լուսաբանելու, կամ թէ Քրիստոսի հետ ի մօտոյ յարաքերութեանց պատուոյն մասնակից գտնուելու փափագով: Մեզի համար կարենորագոյն կէտն է Թաղէսու առաքելոյ քարոզութեամբ քրիստոնէութեան կանուխէն Հայոց մէջ մտած լինելը, և այս կէտը ընդունուած է ամեն յոյն և լատին և հայ աղքիւրներէ, և հետեարար Հայոց եկեղեցական պատմութեան սկզբնաւորութիւնը ըստ ամենայնի պատմական ստուգութիւն մըն է:

11. Թաղէսուի նդեսիայէ Արտագ գալը պատմողներ ուղ. ղակի ճանպորդութիւն մը կենթաղբեն, սակայն ուրիշ աւանդութիւններէ ունիմք Թաղէսուի մը Հայաստանի ուրիշ կողմերն ալ այցելած լինելը, որ աւելի յարմար կուդայ Յուղա Թաղէսուի առաքելական շրջանին: Այն ատեն կարող կը լինիմք ըսել թէ սա ինքն է որ Հրէսաստանէ ելնելով եկաւ Կիլիկիա և Կապադովիկա, ուր եսարիոյ եպիսկոպոս ձեռնադրեց Թէսովիլուսը, և անկէ անցաւ Արարատ և Սիւնիք և Վասպուրական նահանգները, և վերջապէս նահատակուեցաւ Արտագու մէջ Սանդուխտ կոյսին և ուրիշ հայ մարտիրոսներու հետ: Այդ ենթաղբութեան մէջ հայ քրիստոնէութեան սկզբնաւորութեան փաստերն են, Հայոց կեդրոնական նահանգներուն մէջ Թաղէսու առաքելոյ գործունէութիւնը, Սանաւրուկ թագաւորի պատմութիւնը,

և Թաղէսոփ և ընկերաց մարտիրոսութիւնը, և Թաղէսոփ գերեղմանը, որոնք բուն հայ եկեղեցւոյ պատմութեան հիմ կը լինին, և իրարու հետ միացած և իրարմով ամբողջացած և զուտ ազգային աւանդութեան վրայ հաստատուած և օտարազգի աղբիւրներու հետ հակառակութեան չընդհատուող, ինքնուրոյն և ընդունելի պատմութիւն մը կը կազմեն: Այդ պատմութիւնը ունիմք մեք ոսկեղէն դարու նուրիրական դրչով զըրուած (Սոփ. Բ. 13, 61) չնաշխարհիկ յիշատակ հայ եկեղեցւոյն սկզբնաւորութեան, նոյնչափ ստոյդ և նոյնչափ հիմնական, որչափ ուրիշ եկեղեցիներու սկզբնաւորութեանց սեփական յիշատակները և աւանդութիւնները:

12. Թաղէսո առաքեալ Հայոց կեդրոնական նահանգները աւետարաննելէն ետքը կուգայ կամ կը դարնայ Արտազ, ուր է Սանատրուկ թագաւոր, որ քրիստոնեայ եղած չէ, և բարկացած է որ իւր հարազատ դուստրը, Սանդուխտ օրիորդը, տակաւին հազիւ 18 տարեկան աղջիկ մը և ուրիշներ ալ՝ առաքելոյն քարոզութեան հաւանած և քրիստոնեայ եղած են: Սանդուխտ կը բանտարկուի, իսկ հաւատացեալներուն թիւէն է հաղարապետ մը իւր զինուորներով, որ մկրտութեան ատեն կոչուած է Իսրայէլ: Սանդուխտ չարչարանքներու կմնթարկուի և կը մնայ հաստատուն, և նոյն իսկ զինքն համոզելու եկող նախարարն ալ Քրիստոսի կը դարձնէ, որ և կը մկրտուի և Սամուէլ կը կոչուի: Սամուէլ և Խորայէլ և ուրիշ գլխաւորներ կը նահատակուին հրացեալ ըսեռներով: Զարմանդուխտ տիկին կը հաւատայ երկու հարիւր ընկերներով, և առաջ միայն տիկինը կը նահատակուի սրով: Սանդուխտն ալ կը նահատակուի սրով Քաղոցի 7-ին, այսինքն մարտի 22 ին: Ժամանակին գործածուող շարժական տոմարի հաշուով, որ յետոյ հաստատուն տոմարի հաշուով պատասխանած է զեկոտեմբեր 15-ին: Այդ առթիւ հեթանոսք շփոթուելով իրար կը սպաննեն, և երկու հազար հոգի ևս կը հաւատան ի Քրիստոս: Քանի մի օր ետքը Թաղէսո ալ գաղանաց և կրակի տանջանքներուն կենթարկուի, բայց կազմակի և 433 հոգի ևս կը դառնան: Թաղէսոի վրայ գլխաւոման վճիռ կը տրուի, բայց սխալմամբ մը դահիճը Զեմինտոս իշխանը կը զարնէ և կը սպաննէ, այլ առաքեալը զայն կը կենդանացնէ, և իշխանը կը դառնայ 520 ընկերներով: Թաղէսո կը նահատակուի սրով Քաղոցի 13-ին, որ է Մարտի 28-ին շար-

ժական տոմարով, իսկ հաստատուն տոմարով գեկտեմբեր 21
եղած։ Հին յայսմաւուքը այսպէս կը մակազրէ վերջնոց վկայա-
ցանութիւնը. «Յիշատակ է սուրբ առաքելոյն Թադէոսի առա-
քելոյն Հայոց, և վկայութիւն աշակերտաց իւրոց Սամուէլի և
Զարմանդլստորյ և բազմութեան հազարաց որ ընդ նոսա կա-
տարեցան ի Սանատըլոյք»։

13. Թադէոս առաքելոյ և Սանդուխտ կոյսի նշանաց
յայտնուիլը կը յիշէ Խորենացին (Խոր. 241), բայց առանձինն
կատարեալ պատմութիւնն ալ ունիմք (Սոփ. Ը. 87), որ կըսէ
թէ ի սկզբան նահատակաց մարմինները քարերու մէջ ծած-
կուեցան, իսկ Յովհաննէս Մանդակունի կաթողիկոսի և Վահան
Մամիկոնեան մարզպանի ժամանակ, Կիրակոս աշակերտ Դաւ-
թի և Արտազու Սանատորուկ լերան վրայ ճգնող միայնակեաց
մը, տեսիլքով իմացաւ սուրբ նշանաց տեղը, և Սամուէլ քա-
հանայի մը ընկերակցութեամբ փորեց ու գտաւ մէկ կողմ Թա-
դէոսի և Սամուէլի և Խորայէլի, և միւս կողմ Սանդիխտոյ ոս-
կրները, որոց վրայ վկայարաններ ալ չինուեցան։ Ս. Թադէոսի
վկայարանը կը մնայ Արտազ և եղած է Հայոց եկեղեցւոյ մայ-
րավանքներէն և մեծ աթոռներէն մին, և է այժմեան Մակուայ
Ս. Թադէոս վանքը։ Իսկ Ս. Սանդիխտոյ նշանակքը յետ ժամա-
նակաց փոխադրուեցան ի նարեկ, և կը գտնուին տակաւին
Նարեկայ Ս. Սանդուխտ կամ Ս. Դրիգոր վանքին մէջ։ Բայց
այդ տեսիլքին ժամանակէն ալ առաջ պէտք է Ս. Թադէոսի
գերեզմանին և վկայարանին գոյութիւնը ընդունել, որովհետեւ
կը պատմէ նոյն ինքն Խորենացին (Խոր. 328) թէ Անակ իշ-
խան իւր ընտանեօք Պարսկաստանէ Հայաստան եկած ատեն
Արտազու դաշտին մէջ «մօտ առ դիրս սրբ.ց առաքելոյն... և
անդ ասեն զյղութիւն մօր սրբոյ և մեծի Լուսաւորչին, վասն
որոյ և զնորին առաքելոյ շնորհն ընկայեաթ։ Սյդ պարագայն
Խորենացին Ս. Սահակ Պարթիի բերնէն լսեր է, ուրեմն Կիրա-
կոսի ձեռօք նշանաց յայտնուելին առաջ կը յիշուէր ու կը
յարգուէր Ս. Թադէոսի գերեզմանը։

Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵԼՈՍ ՃՈԱՔՆԱԼ

14. Բարթողիմէոս առաքելոյ սլատմութիւնն ալ մութ
կէտեր ունի թէպէտ, սակայն նկատելի է թէ ոչ միայն ազգա-
կին աւանդութիւնը, այլ և Յունաց և Լատինաց եկեղեցինե-

բուն և հեղինակներուն աւանդութիւնները միաբան և միաձայն կերպով և հաստատուն համաձայնութեամբ Բարթողիմէոսը իր ըն Հայոց առաքեալ կը ճանչնան: Բարթողիմէոս անհակառակ տասուերկու առաքեալներէն մին է (Մատթ. Փ. 3). նոյն ինքն Նաթանայէլ (Յով. Ա. 45, ԽԱ. 2), որ Քրիստոսի համար ամեն առաքեալներէն առաջ Որդի Աստուծոյ գաւանութիւնը տուաւ (Յով. Ա. 49), և արժանի է Նախադաւան առաքեալ անուամբ փառաւորութի, ինչպէս և Քրիստոսէ փառաւորուեցաւ իրը այլ զորում նենգութիւն ոչ գոյց (Յով. Ա. 47): Հետեաբար ինչ որ ալ ըլլայ Թագէոսի անձին և քարոզութեան շուրջը յուզուած խնդիրներուն եցը, Բարթողիմէոսի անձն ու քարոզութիւնը բաւական են Հայոց հաւատքին առաքելական սկզբնաւորութեան, և Հայոց աթոռոյն առաքելական հաստատութեան, և առհասարակ Հայոց եկեղեցւոյն առաքելականութեան նշարատութիւնը ապացուցանել և փառքը ապահովել:

15. Բարթողիմէոսի քարոզութեանց առաջին մասը կատարուած էր Պարթեաց, Մարաց, Պարսից, Ասորւց և Գերմանիկեցւոց երկիրներուն մէջ, ըստ ոմանց նաև ի Հնդկաստան. իսկ իւր կենաց վերջին մասին մէջ քարոզած է ի Հայաստան, ուր և կնքեց իւր կենացը նահատակութեամբ: Հայերէն յատուկ վկայաբանութիւնը կըսէ թէ Բարթողիմէոս մտաւ Հայաստան Սանատրուկ թագաւորի 29 ըդ տարին Թագէոսի նահատակութենէն յետոյ, և թէ առաջ այցելեց Գողթն (այժմ Ագուլիս) ու Սիւնեաց նահանգը, ապա Արտաշատ, ապա Ճերև և Զարեանդ գաւառները, ի վերջոյ Ուրբիանու քաղաքը, ուր Քրիստոնէութեան կը դարձնէ Սանատրուկ թագաւորի քոյր Ոգուհի կոյսը: Տերենտիոս հազարապետ որ Բարթողիմէոսը ձերբակալու զլկուած էր, ինքն ալ կը հաւատայ: Առաքեալը և կոյսը և հազարապետը թագաւորին ատեանը կը հանուին, և առաքեալը ժամ մը քուքերով տանջուելէ ետքը հարուածներու ներքե կը սպանուի, իսկ կոյսն ու հազարապետը սրով կը նահատակուին: Ստեփաննոս Օրբէլեան Բարթողիմէոսի վրայ խօսելով կաւեցնէ թէ Սիւնեաց նահանգի Որդվատ գիւղէն սկսաւ քարոզութիւնը, և թէ Արեկը և Բաղք գաւառները պատելէ յետոյ մտաւ Գողթն (Օքք. 60), և թէ Կումասի աշակերտը Սիւնեաց եպիսկոպոս թողով ինքն անցաւ Վանանդ ու Դուին (Օքք. 61), իսկ նահատակութիւնը չպատմեր, թերևս Սիւնեաց նահանգէն գուրս լինելուն համար:

16. Բարթողիմէոսի քարոզութենէն նշանաւոր յիշատակ մըն ալ Հոգւոց Վանքը ունիմք: Կը պատմուի թէ Աստուածածնայ մահուան առթիւ առաքեալներ Երուսաղէմ ժողվուած էին, բայց Բարթողիմէոս յապատեցաւ: Առաքեալներ իրեն միսիթարութեան համար գերեզմանը բացին, բայց մարմինը չդտան, և Բարթողիմէոսի նուիրեցին Յորիաննէս աւետարանչի նկարած Տիրամօր պատկերը, զոր նա ի միասին բերաւ Հայաստան և զետեղց Դարբնացքար ըսուած տեղը Անձնացեաց գաւառին մէջ, որ է այժմեպն Հոգւոց կամ Հոգեաց վանքը Նօրդուզ գաւառի մէջ: Խորհնացւոյ անուան ներքև յատուկ պատմութիւն մըն ալ ունիմք, ուր կը յիշուի թէ առաքեալը, առաջին անգամ ըլլարով, կուսանաց վանք մը հաստատեց այնտեղ, և անունով կը յիշուին երեք գլխաւոր կոյսերը, Մարիամ և Աննա և Մարթա, հարկաւ մկրտութենէ ետքը այս անունները ստացած, որք և Յուսուհատ և Որմզդատ և Մաքովուր իշխաններու, կամ ըստ այլոց՝ քուրմերու, քոյրերն էին: Հոգւոց վանքին առաքելական հիմնարկութեան աւանդութիւնը մինչև ցայսօր կենդանի է այդ կողմերուն մէջ:

17. Բարթողիմէոսի նահատակութեան հանդամանքներուն վրայ շատ համառօտարան են թէ ազգային պատմութիւնը և թէ պատկերին պատմութիւնը, և կը բաւականանան ըսել թէ «կատարեցաւ առ մեզ յԱրեբանոս քաղաքի» (Խոր. 243): Արդ եթէ լաւագոյն պատմութիւններ աւելի պարագայ չունին, ուրեմն գծուար է աւելորդ պարագաներու վրայ ուժգնութեամբ պընդել: Ուրիշ եկեղեցիներու սովորական եղած վկայաբանութեանց մէջ Բարթողիմէոսի համար կըսուի, թէ մորթեզերծ մահուամբ նահատակուեցաւ, և իրը նշանակ պատկերներու մէջ ձեռքը կը դրուի դանակ մը կամ քերթուած մորթ մը: Մորթեզերծ ընելը արևելեաց ազգաց մէջ յաճախակի գործածուած տանջանք մընէր, ինչպէս պատմութեանց մէջ ալ կը հանդիպիմք, և դժուար չէ Բարթողիմէոս առաքելոյ համար ալ ընդունել, միայն թէ մեր վկայաբանութեանց մէջ երբէք յիշուած չէ. բայց չընդունելու ալ պարտաւորիչ փաստ մը չեմք գտներ: Խոկ նահատակութեան տեղը տարրեր կերպերով գրուած է, գործինակ Ռւրբանոս, Արեբանոս, Աղբանոս և ուրիշ շատ մը աղաւաղումներ: Ասոնց մէջէն Աղբանա—Albanus անունը շատ քիչ կը տարրերի Ալեաս—Աղբակ անունէն, որ է Վասպուրականի ժանօթ գաւառը, ուր ի սկզբանէ անտի ճանչցած են Հայերը

իրենց առաքելոյն Բարթողիմէոսի գերեզմանը, որ եղած է Հայեկեղեցւոյ նշանաւոր աթուներէն մէկը, և որ մինչև ցայսօր առանձին յարգանաց առարկայ եղած է՝ ի հնումն Հադամակերտ և այժմ Պաշտամէ կոչուած քաղաքին մօտ Ա. Բարթողիմէոս վանքին մէջ:

18. Եթէ նախնի ժամանակաց պատմական պարագաներն իսկ ծանր դժուարստթեանց կը հանդիպին քննական տեսութեանց հանդէպ, ալ աւելի ծանր են ժամանակազրական խընդիրները: Սովորաբար կը գրուի թէ անմիջապէս Քրիստոսի համբառնալէն և Հոգւոյն Սրբոյ գալստենէն ետքը Թաղէոս առաքեալ եկաւ, որ կը յարմարի Քրիստոսի 31 թուականին, Քրիստոսի ծնունդը սովորական թուականէն 4 տարի առաջ դնելով, սակայն թէ Թաղէոս աշակերտին նդեսիայէ Արտադ գալը և թէ Թաղէոս առաքելոյն Կեսարիայէն Սիւնիք անցնելը, ալէտք է այդ թուականէն շատ աւելի ետքը դնել: Գործք առաքելոցին պատմութիւնը չարդարացներ առաքելոց անմիջապէս նեռաւոր հեթանոսաց երկիրներ երթալը, և նոյն իսկ սորական յիշատակները չեն ցուցներ Թաղէոսի նդեսիոյ մէջ մնալուն աւտոպութիւնը: Սովորաբար ընկալեալ և ըստ բաւականին հաւանական հաշւոյն համեմատ՝ Թաղէոսի և Սանդիմոյ նահատակութիւնը կը դրուի Քրիստոսի համբարձումէն 13 տարի ետքը, որ կը լինի Քրիստոսի 43 թուին, Քրիստոսի թուականը սկսելով միշտ Քրիստոսի ծնունդէն 4 տարի ետքը, ինչպէս որ նոյն ժամանակադիրներ կը հաշուեն: Թաղէոսի և Սանդիմոյ Սանատրուկ թագաւորի ձեռքով նահատակուիլը քննական պատմութեան ցուցուցած թուականներուն ալ կը յարմարի, ըստ որում Սանատրուկի թագաւորութիւնը կը դրուի Քրիստոսի 37 թուականէն մինչև 45: Իսկ Բարթողիմէոսի քարոզութեան սկզբնաւորութիւնն համար դժուարին է իր հիմառնուկ Սանատրուկի 29-րդ տարին, քանի որ Սանատրուկ այդշափ երկար թագաւորած չէ, և ևս քան զևս դժուարին կը լինի ենթադիրն որ Բարթողիմէոս ալ Սանատրուկի հրամանով նահատակուած լինի Թաղէոսի նահատակուելէն քառորդ դար ետքը, որովհետեւ շատեր Բարթողիմէոսի նահատակութիւնը կը յետաձգեն Քրիստոսի 68 թուին: Նոյն իսկ Աղքակ գաւառի մէջ Թագաւորին և թագաւորին ըրոջ ներկայութիւնը այնպէս ենթադրել կուտայ, թէ Աղքակ թագաւորական մայրաքաղաք եղած լինի, մինչ թագաւորանիստ եղած չէ, և նոյն իսկ Թաղէո-

սի նահատակութեան առթիւ ըսուած է թէ Սանատրուկ կը դժմուէր «Ի Շաւարշան, յապարանս արքունի, որ էին հովոց գետինք թագաւորացն Հայոց» (Սով. Ը. 18): Սակայն պէտք չէ կարծել թէ հարկաւ թագաւորի մը հրամանին հարկ ըլլայ նահատակութիւն մը կատարելու համար: Աւելի յետին դարերու մէջ իսկ կը տեսնեմք որ Ս. Արքստակէս Ծոփաց նախարարին և Ս. Գրիգորին Փայտակարանի բղեշխին հրամանով նահատակուցան, և Բարթողիմէսոս ալ կընայ Կորդուաց կամ Վասպուրականի բղեշխի մը հրամանով սպանուած լինել:

19. Իսկ Ոգուհին որ իբր Սանատրուկ թագաւորի քոյր կը լիշուի, գժուարաւ տակաւին կոյս մնացած պիտի լիներ, եթէ քառորդ դար առաջ Սանատրուկի աղջիկն ալ հասած կոյս մըն էր արդէն: Ուստի եթէ Ոգուհին հարկաւ Սանատրուկ թագաւորի քոյր ուզեմք ճանչնալ, պէտք է Ոգուհիին նահատակութիւնը կանխել և Թագէսոսի պատմութեան հետ կցել, և Սանդուխտն ու Զարմաննուխտը ու Ոգուհին նոյն օրերու մէջ վկայակից եղած ենթադրել Բայց եթէ լաւագոյն սեպեմք Բարթողիմէսոսի ընկերը իրմէ չզատել, որ նախադասելի է, կրնամք Ոգուհին ընդունել իբր Բարթողիմէսոսը նահատակող բղեշխին քոյրը, և նոյն իսկ այդ բղեշխին Սանատրուկ անունն ալ պահել, քանի որ Սանատրուկ անունը պատմութեանց մէջ գործածական անուն մըն է: Իսկ թագաւոր պատուանունը անխափիր բղեշխներու և մեծ իշխաններու ալ տրուած է: Բարթողիմէսոսի և Ոգուհեոյ նահատակութեան թուականը ճշդելու համար որոշ կուռսն մը չկայ, քանի որ Սանատրկոյ 29-րդ տարւոյն խօսքն ալ ոչ մի կերպով կարդարանայ: Սանատրուկ մեռաւ 45-ին, և 45-էն մինչև 51 Միւրդատ և Հռադամիզդ վրացիներուն շփոթութեանց միջոցն եղաւ: Անկէ ետքը 51-էն 66 Պարթևաց և Հռովմայեցւոց ծանր պատերազմներուն և փոփոխ իշխելուն միջոցը շարունակեց, պարթևազն Տիրիթի կամ Տրդատի թագաւորութեան պատճառով: Իսկ 66-է 80 վերջնոյս խաղաղ իշխանութեան միջոցն է: Թէպէտև այդ միջոցին մէջ ալ 68-ին Բարթողիմէսոսի նահատակութիւնը դնել դժուարութիւն մը չունի, սակայն մեք յարմարագոյն կը գտնեմք շփոթութեանց վերջնթեր միջոցը, և ուրիշ զանազան պարագաներ ալ նկատի առնլով հաւանականագոյն կը կարծեմք 60-ին դնել Բարթողիմէսոսի նահատակութիւնը:

20. Ցիշեցինք կանխաւ Թագէսոս առաքելոյ վրա յիմօսած

ատեննիս, թէ նոյն իսկ երկու Թադէսս ընդունողներն ալ, Երկուորեակ Թադէսսուէ զատ Յուդա Թադէսսն ալ Հայոց առաքեալ կը ճանչնան, և վերջնոյս գալուստը կը դնեն Բարթողիմէսսի քարոզութեանց միջոցին, և մինչև իսկ աւանդութիւն մը կը կարծէ թէ իրարու ալ հանդիպեցան Արտաշատու մօտ, և Խորվիրապի բլոյն վրայ Օթեաց Խաչ մը ցուցուի, ուր Բարթողիմէսս և Յուդա Թադէսս ի միասին օժեանած ըլլան: Սակայն այս բաները պատմողներ Աերէսս Թադէսսը Յուդա Յուդա Յուդուանէն տարրեր անձ կը կարծեն (Թղթ. 586), որ երբէք ընդունելի չկրնար ըլլալ, և Յուդա Թադէսսի Նըկուրեակ Թադէսսէ ետքը Հայաստանի մէջ քարոզած լինելուն կէտր անլուծելի իմնիիր կը դառնայ: Թովմաս առաքելոյ համար ըսուած է թէ առաքելական բաժանման մէջ արևելեան երկիրներ իրեն վիճակնեցան, և որովհետև ընկալեալ աւանդութեամբ Թովմաս Հնդկաց առաքեալ եղած է, չատ հաւանական է որ Հայոց երկիրէն ալ անցած ըլլայ: Սակայն բնաւ յիշատակութիւն չկայ: Շմաւոն առաքելոյ համար ալ ընկալեալ աւանդութիւնը լընդունի թէ Պարսից առաքելոյ եղած է, և այդ առթիւ Շմաւոնի Հայաստանէ անցած լինելը իրը հաւանական ընդունուած է, մանաւանդ որ Շմաւոնի գերեզմանն ալ կը ցուցուի այժմեան Զուկամերիկ գաւառին մէջ, հին հայ նահանգներուն սահմաններուն մէջ: Այս աւանդութիւնները միտցնելով սովոր են ըսել Հայերը թէ երկուսաններէն չորսը, Թադէսս, Բարթողիմէսս, Թովմաս և Շմաւոն Հայաստան եկած և առաքելական քարոզութեամբ երկիրը նուիրագործած են: Այս չորսերուն վրայ հինգերորդ մըն ալ աւելցնել բոլորովին անտեղի համարուելու չէր, նկատելով որ Յուհաննէս աւեալանչի կաթողիկեայց առաջին թուղթը հին օրինակներէն ոմանց մէջ իրը Պարթևաց ուղղուած թուղթ մը նշանակուած է, և Յովհաննու Պարթևաց և անցողաբար Հայոց ալ կողմերը այցելած լինելը ընական հետութիւն կլինի: Առանց այս ամեն աւանդութեանց վրայ պընդելու, միայն Հայ եկեղեցւոյ և Հայ աթոռոյն առաքելականութեան անվիճնելի կէտ մը լինելը նկատել տալ բաւական կը սեպեմբ:

21. Մեր եկեղեցւոյ տօներուն մէջէն ամենէն հիներն Թադէսս տռաքելոյ և Սանդուխտ կուսին տօները, որք յառաջ զատ զատ տօնուած են, բայց քիչ ետքը իրարու հետ միացած են, և այնպէս կը տօնուին ցարդ Վարդապաւոխն յաջորդող շա-

բաթ օրը: Ուրիշ տօն մըն ալ ունեցած եմք ի հնումն «Առաքելոցն Բարթողիմէոսի և Յուդայի» բացատրութեամբ, այլ Սիմէօն Երևանցի կաթողիկոսը 1774-ին տօնացուցի վրայ ինչ ինչ բարեփոխութիւններ կատարած ատեն, «Առաքելոցն Բարթողիմէոսի և Յուդայի» տօնը, յիսնակաց երրորդ երեքշաբթէն փոխադրած է յիսնակաց առաջին շաբաթ օրը, «Առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսից տօն արձանագրելով, և առաջնորդուելով այն համոզումէ թէ Բարթողիմէոսի հետ տօնուած Յուդայն նոյն ինքն Յուդա Թադէոսն է, և թէ այն ինքն ալ Արտազու մէջ նահատակուած առաջին առաքեալն է, Այսպէս որ Սիմէօննեան ուղղութեամբ միակ Թադէոս մը ունեցած են Հայեր, թէաք նախկին կարգադրութիւնը և ուրիշ ծիսական կարգեր միևնոյն չեն հաստատեր: Օրինակ իմն Վարդան վարդապետի և յանսահման ծովէն շաբականը, «Որ չորրորդ տաւմին մէջ իրեւ Հայոց առաքեալներ կը դնէ Բարթողիմէոս և Թադէոսը, վեցերորդ տօնին մէջ զատէն կը յիշէ Յակոբ Ալփեան և Յուդա Յակոբեան առաքեալները, և բոլոր առաքելոց թիւը Պօղոսով ու Թադէոսով տասնուշորսի կը լրացնէ: Իսկ Աղդէ հայրապետի տօնը հին տօնացոյցներու մէջ կը պակսի. և միջին դարու մէջ կսկսի տեսնուիլ տօն մը յիսնակաց չորրորդ հինգշաբթին, «Աղդէի եպիսկոպոսի նդեսիոյ քաղաքի աշակերտին Թադէոսի կերպով մը հեռացնելով զայն Հայոց եկեղեցիէն: Նոյն օրը Արգարու թուղթերը իրը ճաշու ընթերցուած կարգացուելէն, Արգարու անունն ալ Աղդէի քով իրը տօնելի կսկսի նշանակուիլ աւելի յետին ժամանակաց մէջ, զի Ռուգինեանց ժամանակի տօնացոյցներուն մէջ, (ինչպէս ԺԴ դարուն վերջերը գրուած և մեր ձեռքը գտնուող ձեռագիր մը), Արգարու անունը չպարունակուիր: Վերջապէս 1774-ին Սիմէօննեան բարեփոխութեանց շարքին մէջ Աղդէի և Արգարու անունները կը զատուին և Աղդէն իգնատիոսի և Մարութայի հետ կը միացուի յիսնակաց չորրորդ երկուշաբթին, իսկ Արգարու անունը կը դրուի առանձին յիսնակաց չորրորդ շաբաթ օրը և կը լինի տօն ա. Նախավկայ և անդրանիկ թագաւորին մերոյ սրբոյն Արգարու: Այդ տեղեկութիւնները կը ցուցնեն թէ մեր նախնիք ինքինքնին Եղեսական յարաբերութիւններէն ազատ պահած են, և նդեսիոյ եպիսկոպոսն ու թագաւորը ծիսական հին կարգադրութիւններէն դուրս մնացած են, և այժմեան նոր ձեւեն ալ հիմնական փաստ մը չեն կազմեր Եղեսիոյ քրիստոնէութիւնը իրը Հայոց քրիստոնէութեան հիմքնունելու, որով Հայոց Եկեղեցին կը մնայ իրը ուրոյն և ինքնուրոյն առաքելական հաստատութիւն:

(Կը շարունակուի)